3.1 Պայմանագրի գինը կազմում է \_\_\_\_\_ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն<sup>7</sup>: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

### **4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

### **5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ**

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

<sup>7</sup> Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով<sup>8</sup>:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

<sup>8</sup> Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում փոխանցվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար փոխադրված ընթացքում հարկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**8.15 Պայմանագրով նախատեսված N2 չափաբաժնի մի մասը (192 թեստ), N4 չափաբաժնի մի մասը (300 թեստ), N6 չափաբաժնի մի մասը (2500 թեստ) և N7 - N82 չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:<sup>9</sup>**

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<sup>9</sup> Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:

**ԳՆՈՐԴ**

«ՁԻԱՀ-ի կանխարգելման  
հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ  
ՀՀ, ք.Երևան, Աճառյան 2  
«Արարատբանկ» ԲԲԸ  
ՀՀ 1510035186030100  
ՀՎՀՀ 02504895

**ՎԱՃԱՌՈՂ**

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

-----  
/ստորագրություն/  
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ  
 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\*

«Ղ դրամ

Հ/հ	ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ (Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների)		
	Միջանցիկ կոդը՝ ըստ CPV դասակարգման	Անվանումը	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (հակիրճ բովանդակությունը, տեսակը, տեխնիկական տվյալները, պարամետրերը և հատկանիշները, կատարման պայմանները և պահանջները, որակը, ընդ որում, ապրանքների գնման դեպքում պարտադիր է որակի սերտիֆիկատի առկայությունը կամ գործարանային փաթեթավորումը, եթե դա կիրառելի է տվյալ ապրանքի համար. և այլ անհրաժեշտ տվյալներ)
N 1	33210000	ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի նկատմամբ հակամարմինների հայտնաբերման թեստ-հավաքածու	Նախատեսված է արյան պլազմայում և արյան շիճուկում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Մեթոդը՝ իմունաֆերմենտային անալիզ (ELISA): 96 թեստ (12 ստրիպ x 8 բնիկ) պարունակող տուփով, ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Զգայունությունը՝ 100%: Սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,6%: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 2	33210000	ԻՖԱ մեթոդով ՄԻԱՎ-ի հակաձին/հակամարմինների (HIV Ag/Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու	96 թեստ պարունակող տուփով ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Մեթոդը՝ իմունաֆերմենտային անալիզ (ELISA), 12 ստրիպ x 8 բնիկ: Հավաքածուն պետք է ներառի 96 բնիկ ունեցող միկրոպլանշետ, կոնցենտրիկ լվացող լուծույթ, դրական և բացասական ստուգիչներ, կոնյուգատ 1, կոնյուգատ 2, կոնյուգատ 2-ի նոսրացնող լուծույթ, բուֆեր/սուբստրատ, քրոմոգեն TMB, ռեակցիան կանգնեցնող ռեագենտ: Բնիկներում կոշտ ֆազան պետք է պատված լինի p24 հակաձնի նկատմամբ հակամարմիններով և ռեկոմբինանտային սպիտակուցներով: Նախատեսված է արյան պլազմայում և արյան շիճուկում ՄԻԱՎ-ի p-24 հակաձնի, ՄԻԱՎ 1-ի (ներառյալ M և O խմբերը) և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից նախատրակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products): Զգայունությունը՝ 100%, սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,95%, անալիտիկ զգայունությունը ըստ p24 հակաձնի որոշվող նվազագույն կոնցենտրացիայի՝ 25 պգ/մլ-ից (կամ 0,85 IU/մլ-ից) ոչ ավել:

			<p>Պահանջվող նմուշը՝ չնոսրացված շիճուկ (պլազմա) 75մկլ-ից ոչ ավել: Արտադրողի՝ որակի ապահովման համակարգի եվրոպական (EC), ISO 9001 և ISO 13485 վկայականների առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:</p>
N 3	33210000	ՄԻԱՎ-ի հետազոտության ներլաբորատոր որակի վերահսկման հավաքածու ԻՖԱ մեթոդով	<p>Հավաքածուն նախատեսված է ԻՖԱ մեթոդով հետազոտությունների ներլաբորատոր որակի վերահսկման համար: Հավաքածուն պետք է պարունակի նվազագույնը 18 սրվակ լիոֆիլիզացված շիճուկ, որում առկա են ՄԻԱՎ 1-ի նկատմամբ հակամարմիններ: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:</p>
N 4	33210000	ՄԻԱՎ-ի ԴՆԹ-ի իրական ժամանակում որակական հայտնաբերման թեստ-հավաքածու	<p>Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի դրական և բացասական ստուգիչներ: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: Նախատեսված է արյան մեջ ՄԻԱՎ 1-ի ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:</p>
N 5	33210000	դոնորական պլազմա	<p>Նախատեսված է ՄԻԱՎ-ի տարբեր օպտիկական խտություն ունեցող ստուգիչ նմուշների պատրաստման համար: Փաթեթի քաշը՝ 250գ, լինի ոչ սառեցված վիճակում՝ թափանցիկ, գույնը բաց նարնջագույն, չպարունակի էրիթրոցիտներ, ոչ մամացային (խիլիոզ) պլազմա: Սիֆիլիսի հակամարմինների (ԻՖԱ մեթոդով), բրուցելյոզի (ազյուտինացիայի մեթոդով), հեպատիտ C-ի հակամարմինների (ԻՖԱ մեթոդով), հեպատիտ B-ի (ԻՖԱ մեթոդով) և ՄԻԱՎ-ի հակածին-հակամարմինների (ԻՖԱ մեթոդով) բացասական արդյունքներով: Փաթեթի վրա նշված լինի քանակը, պատրաստման ժամկետը, պահպանման ջերաստիճանային ռեժիմը, սպառման ժամկետը և արտադրող կազմակերպության անվանումը: Մատակարարել պատրաստելուց հետո 2 օրվա ընթացքում:</p>
N 6	33210000	իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի հակամարմինների հայտնաբերման համար, 1	<p>Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ-հավաքածու: Նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակամարմինների հայտնաբերման համար: Կիրառվող ռեկոմբինանտ հակածինները՝ ՄԻԱՎ 1-ի համար (նվազագույնը՝ p24 և gp41), ՄԻԱՎ 2-ի համար (նվազագույնը՝ gp36): Հավաքածուն պետք է պարունակի նոսրացնող բուֆեր: Թեստի տեսակը կասետային (Cassette): Չգայնությունը՝ նվազագույնը 100%, սպեցիֆիկությունը՝ նվազագույնը՝ 99,6%: Արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ 5-20 րոպե: Պահպանման ջերմաստիճանը՝ 2-30°C: Թեստ-հավաքածուն պետք է ընդգրկված լինի ԱՀԿ-ի կողմից նախատրակավորված թեստերի ցանկում (WHO list of prequalified in vitro diagnostic products): ISO13485 որակի վկայականի առկայություն: Պահպանման ժամկետը՝ առնվազն 12 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:</p>

N 7	33211320	ԻՖԱ մեթոդով հեպատիտ B-ի հակաձնի (HBs) հայտնաբերման թեստ-հավաքածու	96 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Նախատեսված է արյան մեջ հեպատիտ B-ի վիրուսի մակերեսային հակաձնի (HBsAg) հայտնաբերման համար՝ ԻՖԱ մեթոդով: Անալիտիկ զգայունությունը՝ նվազագույնը 0.05 ՄՄ/մլ (IU/ml): Զգայունությունը՝ 100%: Սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,9%: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 8	33210000	ԻՖԱ մեթոդով հեպատիտ C-ի վիրուսի նկատմամբ հակամարմինների (HCV Ab) հայտնաբերման թեստ-հավաքածու	96 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Նախատեսված է արյան մեջ հեպատիտ C-ի վիրուսի նկատմամբ հակամարմինների HCV Ab (IgM և IgG) հայտնաբերման համար՝ ԻՖԱ մեթոդով: Կիրառվող ռեկոմբինանտ հակաձիները՝ նվազագույնը՝ Core, NS3, NS4, NS5: Զգայունությունը՝ 100%: Սպեցիֆիկությունը (դոնորների նմուշները հետազոտելիս)՝ նվազագույնը 99,8%: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 9	33210000	ԻՖԱ մեթոդով Տոքսոպլազմայի նկատմամբ IgG-հակամարմինների հայտնաբերման թեստ-հավաքածու	96 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Նախատեսված է արյան շիճուկում տոքսոպլազմայի նկատմամբ IgG-հակամարմինների հայտնաբերման համար՝ ԻՖԱ մեթոդով: Պետք է պարունակի կալիբրատոր քանակական հետազոտություններ իրականացնելու համար: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 10	33210000	ԻՖԱ մեթոդով Ցիտոմեգալովիրուսի նկատմամբ IgG-հակամարմինների հայտնաբերման թեստ-հավաքածու	96 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Նախատեսված է արյան շիճուկում ցիտոմեգալովիրուսի նկատմամբ IgG-հակամարմինների հայտնաբերման համար՝ ԻՖԱ մեթոդով: Պետք է պարունակի կալիբրատոր քանակական հետազոտություններ իրականացնելու համար: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 11	33210000	ՄԻԱՎ-ի հաստատման թեստ-հավաքածու՝ New Lav-BLOT	Իմունաբլոտ՝ ՄԻԱՎ-ի հաստատման թեստ-հավաքածու: 18 թեստ պարունակող տուփով, արդյունքների վերծանումը պետք է կատարվի համաձայն ԱՀԿ-ի չափանիշների, թեստ-համակարգի ստուգիչ շերտերի քանակը պետք է լինի 10-ից ոչ պակաս, ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 12	33210000	Իմունաքրոմատոգրաֆիկ արագ թեստ ՄԻԱՎ-ի հակաձի/հակամարմինների	4-րդ սերնդի իմունաքրոմատոգրաֆիկ թեստ-հավաքածու: Նախատեսված է ամբողջական արյան մեջ, արյան շիճուկում և պլազմայում ՄԻԱՎ 1-ի և ՄԻԱՎ 2-ի հակաձի/հակամարմինների հայտնաբերման համար:

		հայտնաբերման համար	Թեստի տեսակը կասետային (Cassette): Հավաքածուն պետք է պարունակի նոսրացնող բուֆեր: Չգայնությունը՝ 100%, սպեցիֆիկությունը նվազագույնը՝ 99,1%: Արդյունքների վերծանման ժամանակահատվածը՝ առավելագույնը 20 րոպե: Պահպանման ջերմաստիճանը՝ 2-30°C: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պահպանման ժամկետը՝ առնվազն 12 ամիս: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 13	33210000	Սիֆիլիսի քանակական և որակական հայտնաբերման թեստ-հավաքածու՝ (TPHA) եղանակով	100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու (TPHA): Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Թեստ-հավաքածուի բաղադրությունը. թեստային և կոնտրոլ բջիջների նվազագույն քանակը՝ 2 x 4,5մլ յուրաքանչյուրը, նոսրացնող լուծույթի նվազագույն քանակը՝ 21,0մլ, դրական և բացասական կոնտրոլների նվազագույն քանակը՝ 0,2մլ յուրաքանչյուրը: Նախատեսված է արյան շիճուկում սիֆիլիսի կիսաքանակական և որակական հայտնաբերման համար, պասիվ հեմագլյուտինացիայի եղանակով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 14	33210000	Սիֆիլիսի քանակական և որակական հայտնաբերման թեստ-հավաքածու՝ պրեցիպիտացիայի (RPR) եղանակով	100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Նախատեսված է արյան շիճուկում սիֆիլիսի քանակական և որակական հայտնաբերման համար, պրեցիպիտացիայի (RPR) եղանակով: Պետք է պարունակի ագլյուտինացիայի քարտեր, դրական և բացասական կոնտրոլներ: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 15	33210000	Partec CD4%-ի ռեագենտների թեստ-հավաքածու	100 թեստ պարունակող տուփով: Նախատեսված է արյան մեջ CD4%-ի T-լիմֆոցիտների հաշվարկման համար: Ծավալային բացարձակ հաշվարկման համար պետք է համատեղելի լինի CyFlow® Counter (Partec) սարքի հետ: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
N 16	33210000	Partec CD4-ի ռեագենտների թեստ-հավաքածու	100 թեստ պարունակող տուփով: Նախատեսված է արյան մեջ CD4 T-լիմֆոցիտների հաշվարկման համար: Ծավալային բացարձակ հաշվարկման համար պետք է համատեղելի լինի CyFlow® Counter (Partec) սարքի հետ: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
N 17	33210000	Partec Control Blood թեստ-հավաքածու	50 թեստ պարունակող տուփով: Չոր/լիոֆիլիզացված ստաբիլիզացված արյան նմուշներ որակի ստուգման և արտաքին որակի գնահատման համար: Օգտագործման համար պատրաստի արյան հաբեր: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
N 18	33210000	Partec CountCheck beads green թեստ-հավաքածու	50 թեստ պարունակող տուփով: Նախատեսված է CyFlow Counter (Partec) իմունացիտոմետրիկ համակարգի աշխատանքի որակի վերահսկման համար: Լիոֆիլիզացված, կոնցենտրացիան՝ 20.000-25.000 մասնիկ/մլ: Հարմարեցված է կանաչ լազերի համար: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:



N 19	33210000	Աշխատանքային լուծույթ Sheath fluid for flow systems (5 liter) + tap	5լ տարողությամբ տարայով: Աշխատանքային լուծույթը ( Sheath fluid for flow systems (5 liter)+tap) նախատեսված է CyFlow® Counter (Partec) իմունացիտոմետրիկ համակարգի համար: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
N 20	33210000	Ապակոնտամինացիայի լուծույթ	250մլ տարողությամբ սրվակով: Նախատեսված է CyFlow® Counter (Partec) իմունացիտոմետրիկ համակարգի մաքրման համար: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
N 21	33210000	Հիպոքլորիդի լուծույթ	250մլ տարողությամբ սրվակով: Նախատեսված է CyFlow® Counter (Partec) իմունացիտոմետրիկ համակարգի հիդրոհամակարգի ախտահանման համար: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
N 22	33210000	Մաքրման լուծույթ	250մլ տարողությամբ սրվակով: Նախատեսված է CyFlow® Counter (Partec) իմունացիտոմետրիկ համակարգի մաքրման համար: Պիտանելիության ժամկետի առնվազն 65%-ի առկայություն մատակարարման պահին:
N 23	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում ՄԻԱՎ-ի քանակական որոշման համար	Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է բաղկացած լինի 2 մասից՝ 1. վիրուսային ՆԹ-ների անջատման հավաքածուից, 2. Իրական ժամանակում ՄԻԱՎ-ի քանակական որոշման հավաքածուից: Հավաքածուն ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: Նախատեսված է արյան մեջ ՄԻԱՎ 1-ի քանակական որոշման համար՝ ՊՇՌ եղանակով: Հայտնաբերման նվազագույն սահմանը ոչ ավել քան 50 պատճեն/մլ: Հավաքածուն պետք է ներառված լինի Գլոբալ Հիմնադրամի (ԳՀ) ախտորոշիչ թեստ-հավաքածուների և սարքավորումների որակի ապահովման քաղաքականությանը համապատասխանող (Global Fund Quality Assurance Policy) ցանկում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 24	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում HLA-B5701 որակական որոշման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի դրական և բացասական ստուգիչներ: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: Նախատեսված է ամբողջական արյունից HLA-B*5701-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 25	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում գարդներելայի (G.vaginalis) որակական հայտնաբերման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Նախատեսված է միզասեռական ուղիների քերուկում գարդներելայի (G.vaginalis) ՊՇՌ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:

N 26	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում գոնորեայի ( <i>N.gonorrhoeae</i> ) որակական հայտնաբերման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Նախատեսված է միզասեռական ուղիների քերուկում գոնորեայի ( <i>N.gonorrhoeae</i> ) ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 27	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում խլամիդիայի ( <i>C. trachomatis</i> ) որակական հայտնաբերման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Նախատեսված է միզասեռական ուղիների քերուկում խլամիդիայի ( <i>C. trachomatis</i> ) ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 28	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում միկոպլազմայի ( <i>M.hominis</i> ) որակական հայտնաբերման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է պարունակի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Նախատեսված է միզասեռական ուղիների քերուկում միկոպլազմայի ( <i>M.hominis</i> ) ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 29	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում ուրեապլազմայի ( <i>U.urealyt/parv.</i> ) որակական հայտնաբերման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Նախատեսված է միզասեռական ուղիների քերուկում ուրեապլազմայի ( <i>U.urealyt/parv.</i> ) ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 30	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում տրիխոմոնիազի ( <i>T.vaginalis</i> ) որակական հայտնաբերման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Նախատեսված է միզասեռական ուղիների քերուկում տրիխոմոնիազի ( <i>T.vaginalis</i> ) ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 31	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում տրիխոմոնիազի	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Նախատեսված է միզասեռական

		(T.vaginalis), գոնորեայի (N. Gonorrhoeae), խլամիդիայի (C. trachomatis) որակական որոշման համար	ուղիների քերուկում տրիխոմոնիազի (T.vaginalis), գոնորեայի (N. Gonorrhoeae), խլամիդիայի (C. trachomatis) ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով իրական ժամանակում: Ձեռնարկը պետք է պարունակի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականների առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 32	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում Հեպատիտ Բ-ի որակական որոշման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: Նախատեսված է արյան մեջ հեպատիտ Բ-ի վիրուսի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 33	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում Հեպատիտ Ց-ի որակական որոշման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուն պետք է ներառի ներքին ստուգիչ, դրական և բացասական ստուգիչներ: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: Նախատեսված է արյան մեջ հեպատիտ Ց-ի վիրուսի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 34	33210000	ՊՇՌ հավաքածու իրական ժամանակում ցիտոմեգալովիրուսի (CMV) որակական հայտնաբերման համար	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Հավաքածուի ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: Նախատեսված է արյան մեջ ցիտոմեգալովիրուսի ԴՆԹ-ի որակական հայտնաբերման համար՝ ՊՇՌ եղանակով: Ձեռնարկում պետք է պարունակվի icycler IQ, iQ5 (Bio-Rad), RotorGene սարքերի ծրագրավորման մեթոդը: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 35	33210000	ԴՆԹ էքստրակցիայի հավաքածու	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Նախատեսված է միզասեռական ուղիների քերուկից կամ քսուկից սեռավարակների հարուցիչների ԴՆԹ-ի անջատման համար: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականների առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 36	33210000	ԴՆԹ/ՌՆԹ էքստրակցիայի հավաքածու	Նվազագույնը 100 թեստ պարունակող տուփով թեստ-հավաքածու: Նախատեսված է կենսաանյութում (պերիֆերիկ արյուն, պլազմա, ամնիոտիկ հեղուկ և այլ կենսաբանական հեղուկներ) ԴՆԹ/ՌՆԹ-ի անջատման համար: Ռեագենտները օգտագործման համար պատրաստի վիճակում են: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:

N 37	33210000	Տրանսպորտային/փոխադրման միջավայր	30մլ տարողությամբ շիկով: Օգտագործվում է սեռավարակների հետազոտության ժամանակ քերուկների վերցման, փոխադրման և պահպանման համար: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ի առկայություն մատակարարման պահին:
N 38	33210000	Ացետոն	≥98% մաքրության HPLC որակի ացետոն, նախատեսված ՊՇՌ հետազոտությունների համար:
N 39	33210000	Easy Lyte վերլուծիչի Ca <sup>++</sup> էլեկտրոդ	Նախատեսված է արյան մեջ Ca <sup>++</sup> իոնների քանակական որոշման համար՝ Medica Easy Lyte Calcium վերլուծիչի միջոցով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 40	33210000	Easy Lyte վերլուծիչի K <sup>+</sup> էլեկտրոդ	Նախատեսված է արյան մեջ K <sup>+</sup> իոնների քանակական որոշման համար՝ Medica Easy Lyte Calcium վերլուծիչի միջոցով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 41	33210000	Easy Lyte վերլուծիչի Na <sup>+</sup> էլեկտրոդ	Նախատեսված է արյան մեջ Na <sup>+</sup> իոնների քանակական որոշման համար՝ Medica Easy Lyte Calcium վերլուծիչի միջոցով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 42	33210000	Easy Lyte վերլուծիչի pH էլեկտրոդ	Նախատեսված է արյան մեջ pH-ի քանակական որոշման համար՝ Medica Easy Lyte Calcium վերլուծիչի միջոցով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 43	33210000	Ռեֆերենս էլեկտրոդ	Նախատեսված է արյան մեջ Na <sup>+</sup> , K <sup>+</sup> , Ca <sup>++</sup> իոնների և pH-ի քանակական որոշման համար՝ Medica Easy Lyte Calcium վերլուծիչի միջոցով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 44	33210000	Եռամակարդակ որակական ստուգման հավաքածու	Եռամակարդակ որակական ստուգման հավաքածու 100 թեստ: Նախատեսված է Medica Easy Lyte Calcium վերլուծիչի համար:
N 45	33210000	Ամենօրյա լվացման լուծույթների հավաքածու	Ամենօրյա լվացման լուծույթների հավաքածու 6X15մլ: Նախատեսված է Medica Easy Lyte Calcium վերլուծիչի համար:
N 46	33210000	Լուծույթների հավաքածու	800մլ տարողությամբ սրվակով: Նախատեսված է արյան մեջ Na <sup>+</sup> , K <sup>+</sup> , Ca <sup>++</sup> իոնների և pH-ի քանակական որոշման համար՝ Medica Easy Lyte Calcium վերլուծիչի միջոցով: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 47	33210000	ԱԼՍՏ գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում IFCC մեթոդով պլանիմետրի միջոցով քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կինետիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 48	33210000	ԱՍՍՏ գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում IFCC մեթոդով ասպարտատամիտոտրանսֆերազայի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կինետիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի

			առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 49	33210000	Ալբումինի գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում ալբումինի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Կոլորիմետրիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 50	33210000	Ալբա ամիլազա հեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում ալբա ամիլազայի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կինետիկ թեստ, մոնոռեագենտ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 51	33210000	Բարձր խտության լիպոպրոտեիդների գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում մասնակի հոմոգենիզացիայի մեթոդով բարձր խտության լիպոպրոտեիդների քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կոլորիմետրիկ թեստ, ուղակի (direct) մեթոդ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 52	33210000	Ցածր խտության լիպոպրոտեիդների գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում մասնակի հոմոգենիզացիայի մեթոդով ցածր խտության լիպոպրոտեիդների քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կոլորիմետրիկ թեստ, ուղակի (direct) մեթոդ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 53	33211120	Գլյուկոզայի գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում GOD-PAP մեթոդով գլյուկոզայի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կոլորիմետրիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 54	33211130	Խոլեստերոլի գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում CHOD-PAP մեթոդով խոլեստերինի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կոլորիմետրիկ թեստ, մոնոռեագենտ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 55	33211140	Ընդհանուր բիլիռուբինի հեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում DPD մեթոդով ընդհանուր բիլիռուբինի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 56	33211140	Ուղղակի բիլիռուբինի հեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում DPD մեթոդով ուղղակի բիլիռուբինի քանակի

			որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 57	33211150	Միզանյութի գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում GLDH մեթոդով միզանյութի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Կինետիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 58	33211160	Կրեատինինի գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում կրեատինինի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կոլորիմետրիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 59	33211170	Միզաթթվի գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում PAP մեթոդով միզաթթվի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կոլորիմետրիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 60	33211180	Եռզլիցերիդներ GPO հեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում GPO-PAP մեթոդով եռզլիցերիդների քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կոլորիմետրիկ թեստ, մոնոռեագենտ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 61	33211270	Ընդհանուր սպիտակուցի գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում ընդհանուր սպիտակուցի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Ֆոտոմետրիկ, կոլորիմետրիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 62	33210000	ԼԴՀ գունահեղուկ	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում և պլազմայում մոդիֆիկացված SCE մեթոդով լակտատդեհիդրոգենազայի քանակի որոշման համար Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կինետիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 63	33210000	Հիմնային ֆոսֆատազա	Հավաքածուն նախատեսված է արյան շիճուկում հիմնային ֆոսֆատազայի քանակի որոշման համար` Lisa 500+ վերլուծիչով: Էնզիմատիկ, կինետիկ թեստ: Ռեագենտները պետք է լինեն անմիջականորեն օգտագործման համար պատրաստի վիճակում: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:

N 64	33210000	Լվացման հիմնային լուծույթ	500մլ տարողությամբ սրվակով: Կյուվետների վազման կոնցենտրացիոն լուծույթ Lisa 500+ վերլուծիչի համար: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 65	33210000	Տրիտոն լուծույթ	500մլ տարողությամբ սրվակով: Նախատեսված է Lisa-500+ կենսաքիմիական վերլուծիչի ասեղի վազման համար: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 66	33210000	Ստուգիչ շիճուկ արնորմալ	Նախատեսված է Lisa500+ և Saturno 150 վերլուծիչներով կենսաքիմիական հետազոտությունների որակի վերահսկման համար: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 67	33210000	Ստուգիչ շիճուկ նորմալ	Նախատեսված է Lisa500+ և Saturno 150 վերլուծիչներով կենսաքիմիական հետազոտությունների որակի վերահսկման համար: ISO 13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
N 68	33210000	Ֆիբրինոգենի կոնցենտրացիայի որոշման թեստ-հավաքածու	Նախատեսված է արյան պլազմայում ֆիբրինոգենի կոնցենտրացիայի որոշման համար՝ Humacloot DUO վերլուծիչի միջոցով: 1 թեստ=0,1 մլ ռեագենտ: Ռեագենտը պետք է լինի անմիջականորեն օգտագործման համար պատրաստի հեղուկ վիճակում: Պետք է պարունակի կոնտրոլ նմուշ ֆիբրինոգենի հայտնի քանակով՝ կալիբրացիա իրականացնելու համար: ISO13485 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին:
